ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45,(060)704010
Էլ.փոստ info@hrazdan.am
27 մարտ 2025 թ. N 994

«ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՍՎԵՏԼԱՆԱ ԿՈՎԱԼԵՆԿՈՅԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հրազդանի համայնքապետարանի կողմից 2024 թվականի օգոստոսի 23-ին հայտարարված «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» ծածկագրով գնման ընթացակարգին «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է մասնակցության հայտ: Բոլոր չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, սակայն վերջինս հրաժարվում է պայմանագրով սահմանված կարգով իրականացնել ապրանքի մատակարարումը, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից դիտվել է որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտում:

Հետևաբար ծանուցում ենք «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին՝ առաջարկելով 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները: Վճարումները չկատարելու դեպքում, «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվի լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

/ ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կատարող՝ տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետ,
գնումներ համակարգող՝ Արմինե Ավագյան
Հեռ. 060-70-40-21

Сканировано с CamScanner